ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի սկզբներին Մայր Աթոռ ս. Էջմիածին ժամանեցին Ամերիկայի հայոց արեւելյան թեմի հայ եկեղեցու երիտասարդաց կազմակերպության 25 անդամ-անդամուհիները, առաջնորդությամբ իրենց ղեկավար բարեշնորհ Հովհաննես սարկավագ Գասպարյանի:

Հուլիսի 18-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 5-ին, ամերիկահայ ուսանողները ուխտի եկան Մայր Աթոռ, մոտիկից ծանոթացան հայ եկեղեցու դարավոր կենտրոն ս. Էջմիածնի և նրա միաբանության կյանքին և գործունեությանը:

Երիտասարդների՝ հայրենիք գալու նպատակն էր եղել նաև մոտիկից ծանոթանալ վերածնված հայոց աշխարհի ձեռքումներին, սերտորեն շփվել հայրենաբնակ հայ ժողովրդի հետ, մոտիկից տեսնել և զգալ նրա մեծ առաջադիմությունը շինարարության, տնտեսական և մշակութային ասպարեզներում:

Երիտասարդները Մայր տաճարում կատարեցին իրենց աղոթքն ու ուխտը և ապա ներկա եղան կիրակամտի ժամերգությանը, որին նախագահում էր Վեհափառ Հայրապետը:

Ժամերգության ավարտին Վեհափառ Հայրապետը բարեհաճում է ընդունել ԱՄՆ-ի հայ երիտասարդաց եկեղեցական կազմակերպության անդամներին:

Հանուն ներկաների որդիական երախտագիտության սրտագին խոսք է արտասանում Հովհաննես սրկ. Գասպարյանը:

Հայոց Հայրապետը ողջունում է ներկայությունը երիտասարդաց կազմակերպության անդամների և Իր օրհնությունը բաշխում բոլորին:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը Իր խոսքի մեջ անդրադառնում է հայ եկեղեցու և հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած հոգևոր, մշակութային և հայրենասիրական մեծ առաքելությանը և շեշտում՝ սեփական հայրենիք և պետականություն ունենալու երջանկությունն ու ապահովությունը, իբրև անսպառ ներշնչումի աղբյուր և ամրակուռ խարիսխ՝ մեր ժողովրդի գոյության և ապագա բոլոր իդեալների իրականացման համար:

Հանուն երիտասարդաց կազմակերպության, որդիական երախտագիտության և շնորհակալության անկեղծ խոսք է ասում Հայոց Հայրապետին Արամ Նորսիկյանը, նաև այն բանի համար, որ Ն. Սրբությունը ամեն դյուրություն ընձեռել էր՝ հաջողեցնելու համար ամերիկահայ մի խումբ երիտասարդների ուխտավորությունը Մայր Աթոռ ս. Էջմիածին և վերածնված հայոց աշխարհ:

Ի նշան ամերիկահայ երիտասարդաց կազմակերպության դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը ունեցած անխախտ հավատարմության և նրա արժանընտիր գահակալ Տ. Տ. Վազգեն Ա Հայոց Հայրապետի բարձր Անձը ու եկեղեցանվեր գործունեությունը Ա. Նորսիկյանը Մայր Աթոռի պայծառության համար ամերիկահայ երիտասարդաց կազմակերպության կողմից նվիրում է 1000 դոլար:

Վեհարանում ամերիկահայ երիտասարդների հետ հանդիպումն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և աջահամբույրով: Բոլոր ներկաները հյուրասիրվում են մրգերով:

Ժամը 21-ին Վեհարանի հանդիսությանց դահլիճում ամերիկահայ երիտասարդները դիտում են Վեհափառ Հայրապետի՝ 1955 թվականի ընտրության և օծման հանդիսություններին, ինչպես նաև վերջերս Ն. Ս. Օծության Հռոմ՝ Սրբազան Պապին տված պատմական այցելությանը նվիրված կինոժապավենները:

Այնուհետև ամերիկահայ երիտասարդները շուրջ մեկ ամիս շրջագայում են մայր հայրենիքում և կատարելագործում մայրենի լեզվի իրենց իմացությունը: Նրանք միևնույն ժամանակ պարի մասնավոր դասեր են վերցնում:

Երիտասարդները հաճախ ներկա էին լինում Մայր տաճարում եկեղեցական արարողություններին:

Հայրենասեր երիտասարդները իրենց ազատ ժամերին ծանոթանում էին նաև հայրենիքի տեսարժան վայրերին և ուխտի գընում պատմական վանքերն ու եկեղեցիները:

Չափազանց ողջունելի է այս հայրենասիրական նախաձեռնությունը: